# ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՒԻՉԻ «Առանց դաւանանքի» վէպի շարունակութիւնը ստացած չը լինելու պատճառով՝ չը կարողացանք հրատարակել այս անգամ։

† ՎԱԽՃԱՆԵՑԻՆ Ռուդոլֆ ֆոն Ի հ ե ր ի ն գ, հռչակաւոր գերմանացի իրաւագէտը. Էրնեստ Ռ ը ն ա ն, աշխարհահռչակ ֆրանսիացի գրողը, հեղինակը Իսրայէլացոց ազգի պատմութեան, Քրիստոնէութեան սկզբնաւորութեան պատմութեան և այլն, և Տ ե ն ն ի ս ո ն՝ Անգլիայի ժամանակակից ամենանշանաւոր բանաստեղծը։

ՊՐՈՖ. Գ. Գ. ՇՐՈՒՄՖԸ մեզ գրած մի նամակով հաղորդում է, որ Լոնդոնում գումարուած արևելագէտների 9-րդ կոնգրեսի արիական բաժնի նիստում առ. 7 սեպտեմբ. (Նոր տոմար) նա կարդաց մի զեկուցում հայկական ուսմունքների յառաջդիմութեան մասին, որը վերջացրեց առաջարկութիւնով՝ որ Կոնգրեսը հաւանութիւն տայ կազմելու մի Միջազգային Ընկերութիւն հայկական ուսմունքները յառաջացնելու համար (Société Internationale pour l'avancement des Etudes arméniennes), նման այն ընկերութիւններին, որոնք նոր ժամանակներումս հիմնուեցին Անգլիայում և Ֆրանսիայում յունական ուսմունքների համար։ Արիական բաժնի նախագահ պրոֆ. պ. Cowel-ի՝ նկատողութիւններից և պրոֆ. պ. Մինաս Չերազի պաշտպանութիւնից յետոյ՝ Կոնգրեսը ընդունեց պ. Շրումֆի առաջարկը։

ՊՐՈՖ. Գ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆԻ գրուածքի առիթով, տպած «Մուրճ» № 6, «Արձագանք» օրաթերթի մէջ №№ 102 և 103 լոյս տեսաւ պ. Խ. Յովհաննիսեանի կողմից մի ընդդիմախօսութիւն, ուր յօդուածագիրը պնդում է իբր թէ պ. Խալաթեանը իւր յօդուածը յարմարցրել է պ. Ստ. Մալխասեանի յօդուածին, որ տպած էր «Մուրճ» № 5. Բայց «Մուրճ»-ի խմբագրութեան կողմից նոյն № 6-ում յայտարարուած էր որ պ. Խալաթեանի յօդուածը տուած էր լոյս տեսնելուց աւելի քան մի ամիս առաջ, մայիսի վերջերքին,

երբ պ. Մալխասեանի յօդուածը դեռ լոյս չէր տեսել. Այդպիսի յարաբերութիւնից յետոյ, եթէ աւելին չասենք՝ տարօրինակ են թւում այն առասպելները որ պատմում է պ. Խ. Ցովհաննիսեանը պ. Խալաթեանի յօդուածի մասին.

ՀԱՑ-ԲՈՇԱՆՆԵՐ «Մուրճ»-ի այս համարում վերջացող յօդուածի հեղինակ մեր աշխատակից պ. Գ. Վ ա ն ց ե ա ն ը գրում է մեզ՝ թէ այդ յօդուածը հանւած է իւր մի աւելի ընդարձակ աշխատասիրութիւնից, որի պարունակութիւնն է բոշաների կեանքի աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը, բոշայերէնի բառարանը, բոշայերէն նախադասութիւններ և երգեր, բոշաների անցեալը և մարդաբանական տեղեկութիւններ բոշաների մասին.

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 7—8.

Գ. Ա. Շրումֆի յօդուածում՝

էջ 1111 տող 17 տպւած է գերերում, ուղիղն է դարերում.

» 1119 » 13 » propanda » propaganda

» 1120 » 14 » որոնց իրանց » որոնք իրանց

Ա. Արասխանեանցի յօդուածում՝

էջ 1148 տող 10—14 անգլիական մինիստրութիւնների ցուցակում սպրդել են մի երկու անճշդութիւններ. ցուցակը պէտք է բարեփոխել այսպէս՝

1866—1868 մինիստրութիւն Դերբի և Դիզրաէլի (պահպանող.)

1868—1874 մինիստրութիւն Գլադստոնի (ազատամիտ)

1874—1880 մինիստրութիւն լորդ Բիկոնսֆիլդի (պահպ.)

1880—1885 մինիստրութիւն Գլադստոնի (ազատ.)

1885 յունիս—1886 յունւար մինիստ. Սալսբըրի (պահպ.)

1886 փետր.—1886 յուլիս մին. Գլադստոնի (ազատ.)

1886—1892—մինիստրութիւն Սալսբրի (պահպանողական).

Զ-ի յօդուածում (Քաղ. Տնտեսութիւն).

էջ 1230 տող 2 տպւած է Վէյմուր, պէտք է լինի Վէյմար

14 » զարգացմար » » զարգացման

19 » ուր » » որ

8 (ներքևից) 1758—65 » » 1756—63.

«Մուրճ» № 6 Երաժշտական քրոնիկում՝

էջ 983 տող 6 տպւած է Տրաւիատա, ուղիղն է Տրուվատոր.

---

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ